

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1951 թ., Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է իր ծննդավայրի միջնակարգ դպրոցում:

1965—1966 ուսումնական տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1970—1971 ուսումնական տարեշրջանում՝ փայլուն առաջադիմությամբ: 1970 թ. Մայր Աթոռում ձեռնադրվել է սարկավագ:

Հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո, մեկ տարի պաշտոնավարել է նույն հարկի տակ՝ որպես վերակացու:

1972 թ. հոկտեմբերին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ Տ. Տիրան արքեպ. Ներսոյանի կողմից:

Այնուհետև Ամենայն Հայոց կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ մեկնել է Վիեննա՝ իր ուսումը կատարելագործելու տեղի աստվածաբանական համալսարանում:

1975 թ. Վեհափառ Հայրապետի հրամանով տեղափոխվել է Արևմտյան Գերմանիա հոգևոր հովվի պաշտոնով, միաժամանակ շարունակելով իր ուսումը Բոնների համալսարանում աստվածաբանության գծով:

1979 թ. վերադարձել է Մայր Աթոռ և նույն տարին մեկնել Զագորսկ՝ տեղի հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում խորացնելու իր աստվածաբանական գիտելիքները:

1980 թ. մարտին Վեհափառ Հայրապետի կողմից պաշտոնի է կոչվել Արարատյան թեմում որպես առաջնորդական փոխանորդի օգնական, իսկ 1983 թ. ապրիլից հայրապետական կոնդակով նշանակվել է նույն թեմի առաջնորդական փոխանորդ:

1983 թ. հոկտեմբերի 23-ին Մայր տաճարում ձեռնադրվել է եպիսկոպոս՝ նույն թեմի վրա: